



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1572-Ա

ՄՐԱԶ ԶԱՍՄԻ ԲՐՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Մրազ Զասմի Բրոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Զարթոնք բնակավայրի 14-րդ փողոց թիվ 23 հասցեում Մրազ Զասմի Բրոյանին /ծնված 28.09.1951թ./, Զազե Ալիի Թամոյանին / ծնված 09.09.1958թ./, Զադինա Մրազի Թամոյանին / ծնված 01.04.1987թ./, Ալինա Մրազի Բրոյանին / ծնված 18.02.1994թ./ սեփականության իրավունքով պատկանող /04-042-0018-0005/ կադաստրային ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում 2014 թվականին ինքնակամ կառուցված 60,1 քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 2014 թվականին ինքնակամ կառուցված 11,5 քմ արտաքին մակերեսով ծածկը, 2014 թվականին ինքնակամ կառուցված 9,9 քմ արտաքին մակերեսով ծածկը, 2014 թվականին ինքնակամ կառուցված 17,1 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 2014 թվականին ինքնակամ կառուցված 10,7 քմ արտաքին մակերեսով ծածկը, 2014 թվականին ինքնակամ կառուցված 3,5 քմ արտաքին մակերեսով թռչնանոցը, 2014 թվականին ինքնակամ կառուցված 4,1 քմ արտաքին մակերեսով ծածկը՝ համաձայն «ԳԵՈ ՄԵՓ ՓՐՈՋԵԲԹ» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքի՝ ծածկագիր 2023DUVQXG:

2. Բնակելի տուն՝ $60,1 \times 0,1028 \times 10000 = 61790$ / վաթսունմեկ հազար յոթ հարյուր իննսուն / ՀՀ դրամ

Ծածկի՝ $11,5 \times 0,1028 \times 6000 = 7100$ / յոթ հազար մեկ հարյուր / ՀՀ դրամ

Ծածկ՝ $9,9 \times 0,1028 \times 6000 = 6110$ /վեց հազար մեկ հարյուր տաս / ՀՀ դրամ

Օժանդակ շինություն՝ $17,1 \times 0,1028 \times 6000 = 10550$ / տաս հազար հինգ հարյուր հիսուն / ՀՀ դրամ

Ծածկ՝ $0,7 \times 0,1028 \times 6000 = 6600$ / վեց հազար վեց հարյուր / ՀՀ դրամ

Թոչնանոց՝ $3,5 \times 0,1028 \times 6000 = 2160$ / երկու հազար մեկ հարյուր վաթսուն / ՀՀ դրամ

Ծածկ՝ $4,1 \times 0,1028 \times 6000 = 2530$ / երկու հազար հինգ հարյուր երեսուն / ՀՀ դրամ

1) Վճարման ենթակա գումարը կազմում է 96840 /իննսունվեց հազար ութ հարյուր քառասուն / ՀՀ դրամ

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Մեծամորի համայնքապետարանի 900335003407 հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած :

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1571-Ա

ՇԵՆՔԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Ջենմա Արարատի Բաբաջանյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


- Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նախնայան բնակավայրում Ջենմա Արարատի Բաբաջանյանին / ծնված 01.01.1951թ./ սեփականության իրավունքով պատկանող 0,0162 հա / կադաստրային ծածկագիր 04-070-1021-0001 / արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտներ նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 161,9 քմ արտաքին մակերեսով շինության գործառնական նշանակությունը համարել որպես անասնաշենք:
- Շինության համար չի պահանջվում շինարարության և /կամ/ քանդման թույլտվություն:
- Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1570-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 22-ի «Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու մասին» N 633-Ն որոշման հավելվածի 6-րդ կետերի ժ) ենթակետերի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

- 1) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N1-ի,
- 2) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N2-ի,
- 3) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N3-ի,
- 4) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N4-ի,
- 5) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության առևտրի և սննդի ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N5-ի,
- 6) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N6-ի,

7) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N7-ի,

8) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական մատակարարման ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N 8-ի,

9) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայության քաղաքացիական պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N9-ի,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ՝



Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023 թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք. Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1569-Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 384-Ն որոշման հավելվածի 7-րդ կետերի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

- 1) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N1-ի,
- 2) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N2-ի,
- 3) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N3-ի,
- 4) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N4-ի,
- 5) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության առևտրի և սննդի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N5-ի,
- 6) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N6-ի,

- 7) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N7-ի,
- 8) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական մատակարարման ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N8-ի,
- 9) Մեծամոր համայնքի քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N9-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թվականի հունիսի 16
ք.Մեծամոր



Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1568-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի 2003 թվականի ապրիլի 4-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» N 384-Ն որոշման 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքում համայնքապետարանի աշխատակազմի բազայի վրա և պետական կառավարման տարածքային մարմինների ստորաբաժանումների բազայի հիմքի վրա, ստեղծել քաղաքացիական պաշտպանության ծառայություններ հետևյալ կազմով՝

- 1) քաղաքացիական պաշտպանության կապի և ազդարարման ծառայություն,
- 2) քաղաքացիական պաշտպանության ինժեներական ծառայություն,
- 3) քաղաքացիական պաշտպանության բժշկական ծառայություն,
- 4) քաղաքացիական պաշտպանության տրանսպորտային ծառայություն,
- 5) քաղաքացիական պաշտպանության առևտրի և սննդի ծառայություն,
- 6) քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն,
- 7) քաղաքացիական պաշտպանության բույսերի և կենդանիների պաշտպանության ,

8) քաղաքացիական պաշտպանության նյութատեխնիկական մատակարարման ծառայություն,

9) քաղաքացիական պաշտպանության կոմունալ-տեխնիկական ծառայություն,

2. Հաստատել քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերի կազմը՝ հանաձայն հավելվածի:

3. Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝

1) եռօրյա ժամկետում ստեղծել ծառայության շտաբ,

2) ղեկավարվելով ՀՀ կառավարության N 384-Ն որոշման 9-րդ և 10-րդ կետերի դրույթներով, հնգօրյա ժամկետում մշակել ծառայություններ կանոնադրությունները և ներկայացնել քաղաքացիական պաշտպանության պետի հաստատմանը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ



2023 թվականի հունիսի 16
ք.Մեծամոր

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի
2023թ հունիսի 16-ի N 1568 որոշման




ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ

Հ/ h	Քաղաքացիական պաշտպանության ծառայության անվանումը	Ծառայության պետ (ա. ա. հ.)	Զբաղեցրած պաշտոնը հիմնական աշխատավայրում
1	2	3	4
1	կապի և ազդարարման	Թադևոսյան Նինա Գուրգենի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ
2	ինժեներական	Դարբինյան Նորայր Արմենի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ
3	բժշկական	Բաղդասարյան Վարդան Լեոնիկի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ
4	տրանսպորտային	Մխիթարյան Արմեն Մուխաիլի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Կոմունալ տնտեսությունների, համատիրությունն երի աշխատանքների համակարգման և տրանսպորտի բաժնի պետ
5	առևտրի և սննդի	Խաչատրյան Գևորգ Մուշեղի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի սպասարկման և գովազդի բաժնի պետ
6	էներգետիկայի և լուսաբոլորկման	Գալստյան Էդվարդ Սպարտակի	Մեծամոր համայնքի «Կանաչապատում և լուսավորություն» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն

7	բույսերի և կենդանիների պաշտպանության	Մարտիրոսյան Ռուստամ Կարապետի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ
8	նյութատեխնիկական մատակարարման	Մկրտչյան Հովհաննես Հրաչյայի	Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի Եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ
9	կոմունալ-տեխնիկական	Մախյան Կարեն Գեղամի	Հ.Հ.Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի փոխտնօրեն

Աշխատակազմի քարտուղար՝



Մ. Հովհաննիսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1567-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 2512 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Մեծամոր համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Մեծամոր համայնքի 2023 թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N 6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 22-ի «Մեծամոր համայնքում աղետների ռիսկի կառավարման պլանը հաստատելու մասին» N 2512 որոշումը
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր



Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1566-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՔՆԱՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՔՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Քնարիկ Գևորգի Մարտիրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրում Քնարիկ Գևորգի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 04020GTGH2RG, կադ. ծածկագիր՝ 04-020-0037-/ տրամադրել գույքի բաժանումից առաջացող հասցե՝ Մեծամոր համայնք, Արմավիր բնակավայր, 1-ին փողոց, 13/1 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1565-Ա

ՔԱՂԱՔԱՅԻ ՔՆԱՐԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Քնարիկ Գևորգի Մարտիրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրում Քնարիկ Գևորգի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասին/ծածկագիր՝ 04020TEXB89B, կադ. ծածկագիր՝ 04-020-0037-/ տրամադրել գույքի բաժանումից առաջացող հասցե՝ Մեծամոր համայնք, Արմավիր բնակավայր, 1-ին փողոց, 13 հողամաս:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1564-Ա

ՎՈԼՈՂՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՆԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ
ՀՈՂԱՏԵՍՔ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066 որոշմամբ, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի Շենական բնակավայրի բնակիչ Վոլոդյա Հայրապետյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շենական բնակավայրի բնակիչներ Վոլոդյա Հայրապետյանին, Նելի Պետրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 04-079-105-041/ 1,4 հա հողամասի 0,4 հա (ծիրանենի), 0,5 հա (կեռասենի) ցածրարժեք հողատեսքեր՝ 3-րդ կարգի վարելահողերը փոխադրել բարձրարժեք բազմամյա տնկարկների՝ որպես պտղատու այգիներ:

2. 2023 թվականի հողային հաշվեկշռում համապատասխան փոփոխություն չկատարել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1563-Ա

ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքին պատկանող բնակելի տանը/ծածկագիր՝ 04042AJ5CXD8, կադ. ծածկագիր՝ 04-042-0112-0163/ տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնք՝ Զարթոնք բնակավայր, 4-րդ փողոց, 8 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1562-Ա

ԿԱՐԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N698-Ն որոշմամբ և հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կազմած հողամասի հատակագիծը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքի գ. Նորապատ 9-րդ փողոց 40 հասցեում Կարինե Սահակյանին սեփականության իրավունքով (սեփականության վկայական 2432625) պատկանող 1,85 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության հատկացված հողամասից փաստացի ավել օգտագործվող 0,0639 հա հողամասը հատկացնել իրեն:
2. Կատարել սահմանների ճշտում և համայնքի կադաստրային քարտեզում ուղղում:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1561-Ա

0,4727 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 2-Ի N1196-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թականի մարտի 31-ի N 86 եզրակացությունը ինչպես նաև Մեծամոր համայնքի ավագանու 2023 թվականի հունիսի 13-ի N 107-Ա որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրում գտնվող Ռազմիկ Լևոնի Եսայանին սեփականության իրավունքով պատկանող 0,4727 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողամասի /սեփ. վկայական N 0112022-04-0021, կադ. ծածկագիր 04-075-0159-0024/ նպատակային և գործառնական նշանակությունները փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական կառուցապատման հողեր գործառնական նշանակության:

2. Առաջարկել Ռազմիկ Լևոնի Եսայանին՝ համայնքի բյուջե վճարել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի կադաստրային արժեքների նպատակային նշանակության

փոփոխման պահին առկա տարբերությունը, որը կազմում է 7436513 (յոթ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար հինգ հարյուր տասներեք) ՀՀ դրամ:

3. Փոփոխված 0,4727 հա հողամասը արտացոլել համայնքի հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում :

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 2-ի «0,4727 հա հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին» N 1196-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ



2023 թվականի հունիսի 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1560-Ա

ԱՇՈՏ ՌԱԶՄԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ, ԱՐԵՎ ԲԱՂՇԻԿԻ ԽԱՌԱՏՅԱՆԻՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔԻ
ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066 որոշմամբ, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրի բնակիչ Աշոտ Միքայելյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արմավիր բնակավայրի բնակիչներ Աշոտ Ռազմիկի Միքայելյանին, Արև Բաղշիկի Խառատյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 04-020-0101-0013/ 6 հա հողամասի 1,5 հա (խաղողի այգի), 3 հա (ծիրանենի), 1,5 հա (կեռասենի) ցածրարժեք հողատեսքեր՝ 5-րդ կարգի վարելահողերը փոխադրել բարձրարժեք բազմամյա տնկարկների՝ որպես պտղատու և խաղողի այգիներ:
- 2023 թվականի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1559-Ա

ԱՇՈՏ ՍԱՐԳՍԻ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻՆ, ՍԱԹԵՆԻԿ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 1355-Ա
ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ
իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի
1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի
սեպտեմբերի 17-ի թիվ 1066 որոշմամբ, և հիմք ընդունելով Մեծամոր համայնքի
Եղեգնուտ բնակավայրի բնակիչ Աշոտ Սարգսի Խուրշուդյանի դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ
բնակավայրի բնակիչներ Աշոտ Սարգսի Խուրշուդյանին, Սաթենիկ Ենգիբարյանին
ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր 04-039-
0224-0008/ 7,5 հա հողամասի 4,5 հա (ծիրանենի), 1,3 հա (սալորենի), 0,7 հա
(կեռասենի), 1 հա (ընկուզենի) ցածրարժեք հողատեսքեր՝ 3-րդ կարգի վարելահողերը
փոխադրել բարձրարժեք բազմամյա տնկարկների՝ որպես պտղատու այգիներ:

2. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 23-ի
«Աշոտ Սարգսի Խուրշուդյանին սեփականության իրավունքով պատկանող
հողամասի ցածրարժեք հողատեսք վարելահողը բարձրարժեքի փոխադրելու մասին» N
1355-Ա որոշումը:

3. 2023 թվականի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023 թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք. Մեծամոր

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1558-Ա

ԽԱԴՈ ՄԱՋԻԹԻ ՆԱԲՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայանական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն և 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշումներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով Խաղո Մաջիթի Նաբոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նոր Արտագերս բնակավայրի 3-րդ փողոց 30 հասցեում գտնվող Խաղո Մաջիթի Նաբոյանին / ծնված 25.11.1962 / սեփականության իրավունքով պատկանող /04-0072-0014-0008/ կադաստրային ծածկագրով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում 2014 թվականին ինքնական կառուցված 29,0 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 2014 թվականին ինքնական կառուցված 24,4 քմ արտաքին մակերեսով խոհանոցը, 2014 թվականին ինքնական կառուցված 3,2 քմ արտաքին մակերեսով խորդանոցը, 2014 թվականին ինքնական կառուցված 2,5 քմ արտաքին մակերեսով զուգարանը, 2015 թվականին ինքնական կառուցված 82,4 քմ արտաքին մակերեսով ծածկը, 2011 թվականին ինքնական կառուցված 6,0 քմ արտաքին մակերեսով սուրբը, 2011 թվականին ինքնական կառուցված 355,8 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 2011 թվականին ինքնական կառուցված 3,2 քմ պարիսպը՝ համաձայն «Լևոն Ստեփանյան» ԱԶ-ի կողմից տրված շինությունների և հողամասի հատակագծերի և հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքի՝ ծածկագիր 2023C5CAXF:

2. Օժանդակ շինություն՝ $29,0 \times 0,0874 \times 6000 = 15210$ /տասնհինգ հազար երկու հարյուր տաս / ՀՀ դրամ

Խոհանոց՝ $24,4 \times 0,0874 \times 6000 = 12800$ / տասներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

Խորդանոց՝ $3,2 \times 0,0874 \times 6000 = 1680$ / մեկ հազար վեց հարյուր ութանասուն / ՀՀ դրամ

Զուգարան՝ $2,5 \times 0,0874 \times 6000 = 1320$ / մեկ հազար երեք հարյուր քսան / ՀՀ դրամ

Ծածկ՝ $82,4 \times 0,0874 \times 6000 = 43220$ / քառասուներկու հազար երկու հարյուր քսան / ՀՀ դրամ

Սուրբ՝ $6,0 \times 0,0874 \times 6000 = 3150$ / երեք հազար մեկ հարյուր հիսուն / ՀՀ դրամ

Անասնաշենք՝ $355,8 \times 0,0874 \times 6000 = 186590$ / մեկ հարյուր ութանասունվեց հազար հինգ հարյուր իննսուն / ՀՀ դրամ

Պարիսպ՝ $3,2 \times 0,0874 \times 6000 = 1680$ / մեկ հազար վեց հարյուր ութանասուն / ՀՀ դրամ

1) Վճարման ենթակա գումարը կազմում է 265650 / երկու հարյուր վաթսունհինգ հազար վեց հարյուր հիսուն / ՀՀ դրամ

3. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60 օրյա ժամկետում Մեծամորի համայնքապետարանի 900335003407 հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի միասնական ստորաբաժանումում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1557-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԴՈՒՆՅԱ ԱԹԱՐԻ ԻՐՈՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Դուինյա Աթարի Իբոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայրում՝ Դուինյա Աթարի Իբոյանին ժառանգության իրավունքով պատկանող հողամասին /ծածկագիր՝ 04067PEYREAT կադ. ծածկագիր՝ 04-067-0025-0008/ տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնքի Մրգաշատ բնակավայր, Նոր գյուղատեղ թաղամասի 6-րդ փողոց, 42 հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1556-Ա

ՔԱՂԱՔԱՅԻ ՄՐԱԶ ԶԱՍՄԻ ԲՐՈՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, և հիմք ընդունելով քաղաքացի Մրազ Զասմի Բրոյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Մեծամոր համայնքի Զարթոնք բնակավայրում Մրազ Զասմի Բրոյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /ծածկագիր՝ 04042BBPWGLC կադ. ծածկագիր՝ 04-042-0018-0005/ տրամադրել հասցե՝ Մեծամոր համայնքի Զարթոնք բնակավայր, 14-րդ փողոց, 23 բնակելի տուն:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանում՝ համապատասխան ձևակերպում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ. ԽԱԶԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1555-Ա

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 27-ի N003 որոշումը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ակնալիճ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արմավիր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Զարթոնք գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Այգեշատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենների գրությունները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մրգաշատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ակնալիճ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Արմավիր գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Զարթոնք գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Եղեգնուտ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ, «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Այգեշատ գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ հաճախող երեխաների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների

դիմաց փոխհատուցման վճարի՝ 2023 թվականի համար սահմանված դրույքաչափի նկատմամբ հունիսից կիրառել արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 16
ք.Մեծամոր



Հավելված N1
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2023թ. հունիսի 16 -ի
N 1555-Ա որոշման



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐԳԱՇԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ**

N	Ծնողի ազգանուն-անուն	Երեխայի ազգանուն-անուն- հայրանուն	Հասցե	Արտոնութ.	Զեղչվող վարձավճարի չափ	
					100%	50%
1	Մարության Կարապետ	Մարության Հովհաննես Կարապետի	գ. Մրգաշատ, փ. 9, տ. 35	ազատամարտ. երեխա	7000	
Ընդամենը						
Ընդհանուր					7000	

Աշխատակազմի քարտուղար

Մարատ Հովհաննիսյան

Հավելված N2
 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
 ղեկավարի 2023թ. հունիսի 16-ի
 N 1555-Ա որոշման



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
 ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՆԱԼԻՃ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵԶ» ՀՈԱԿ**

N	Ծնողի ազգանուն-անուն	Երեխայի ազգանուն-անուն- հայրանուն	Հասցե	Արտոնութ.	Զեղչվող վարձավճարի չափ	
					100%	50%
1	Խաչատրյան Աղունիկ	Այվազյան Հովհաննես Արսենի	գ. Ակնալիճ, Գառնիկյան թղմ., 2. 5, բն. 22	նպաստառու	7000	
Ընդամենը						
Ընդհանուր					7000	

Աշխատակազմի քարտուղար

Մարատ Հովհաննիսյան

Հավելված N3
 ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
 ղեկավարի 2023թ. հունիսի 16-ի
 N 1555-Ա որոշման



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
 ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԹՈՆՔ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀՈԱԿ**

N	Ծնողի ազգանուն-անուն	Երեխայի ազգանուն-անուն- հայրանուն	Հասցե	Արտոնություն	Զեղչվող վարձավճարի չափ	
					100%	50%
1	Հասոյան Խանում	Շամոյան Մերի Ռոմանի	գ. Զարթոնք, փ. 8, շ. 5, բն. 1	նպաստառու	7000	
2	Դալարյան Տաթևիկ	Բաղդասարյան Գոռ Արմենի	գ. Զարթոնք, փ. 9, տ. 12	նպաստառու	7000	
3	Բրոյան Քնարիկ	Թամոյան Թոռնիկ Բադոյի	գ. Արտաշար, փ. 14, տ. 8	նպաստառու	7000	
4	Եղնազարյան Գյուլնարա	Արթենյան Աստղիկ Վիգենի	գ. Զարթոնք, փ. 8, շ. 1, բն. 3	նպաստառու	7000	
5	Աղվանյան Արտաշես	Աղվանյան Արևիկ Արտաշեսի	գ. Զարթոնք, փ. 1, տ. 42	ազատամարտ. երեխա	7000	
6	Աղվանյան Արտաշես	Աղվանյան Ալեքս Արտաշեսի	գ. Զարթոնք, փ. 1, տ. 42	ազատամարտ. երեխա	7000	
Ընդամենը					42000	
Ընդհանուր					42000	

Աշխատակազմի քարտուղար

Մարտո Հովհաննիսյան

Հավելված N4
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2023թ. հունիսի 16-ի
N 1555-Ա որոշման



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՁ» ՀՈԱԿ**

N	Ծնողի ազգանուն-անուն	Երեխայի ազգանուն-անուն- հայրանուն	Հասցե	Արտոնութ.	Զեղչվող վարձավճարի չափ	
					100%	50%
1	Ավետիսյան Նուշիկ	Յավրյան Դավիթ Արամայիսի	գ. Արմավիր, փ. 6, տ. 4	նպաստառու	7000	
Ընդամենը					7000	
Ընդհանուր					7000	

Աշխատակազմի քարտուղար

Մարատ Հովհաննիսյան

Հավելված N5
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2023թ. հունիսի 16 -ի
N 1555-Ա որոշման



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳՆՈՒՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵՁ» ՀՈԱԿ**

N	Ծնողի ազգանուն-անուն	Երեխայի ազգանուն-անուն- հայրանուն	Հասցե	Արտոնություն	Զեղչվող վարձավճարի չափ	
					100%	50%
1	Միքայելյան Մարիամ	Միքայելյան Միլանա Օգսենի	գ. Եղեգնուտ, փ. 3, տ. 12	նպաստառու	7000	
2	Մանուկյան Քաջիկ	Մանուկյան Սարգիս Քաջիկի	գ. Եղեգնուտ, փ. 10, տ. 22	ազատամարտ. երեխա	7000	
3	Սիրունյան Երանուհի	Սահակյան Վարսենիկ Կարապետի	գ. Եղեգնուտ, փ. 7, տ. 48	երեք և ավելի երեխա		3500
4	Սիրունյան Երանուհի	Սահակյան Մնաց Կարապետի	գ. Եղեգնուտ, փ. 7, տ. 48	երեք և ավելի երեխա		3500
Ընդամենը					14000	7000
Ընդհանուր					21000	

Աշխատակազմի քարտուղար

Մարատ Հովհաննիսյան

Հավելված N6
ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի
ղեկավարի 2023թ. հունիսի 16 -ի
N 1555-Ա որոշման



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՇԱՏ ԳՅՈՒՂԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵԶ» ՀՈԱԿ**

N	Ծնողի ազգանուն-անուն	Երեխայի ազգանուն-անուն- հայրանուն	Հասցե	Արտոնութ.	Զեղչվող վարձավճարի չափ	
					100%	50%
1	Մարտիրոսյան Արմինե	Թադևոսյան Աբել Գարիկի	գ. Փշատավան, փ. 15, տ. 19	ԿԱՊԿՈՒ	7000	
Ընդամենը						
Ընդհանուր					7000	

Աշխատակազմի քարտուղար

Մարատ Հովհաննիսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1554-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 6-րդ կետերով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով, որ Արմավիր մարզի Մեծամոր համայնքի Երասխահուն բնակավայրի բնակիչ Մարջիկ Մնացականի Ղազարյանի /ծնված 28.03.1959թ./ սեփականության իրավունքով պատկանող 0,127 հա օրինական բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի փաստացի չափը կազմում է 0,1271 հա, հողամասին կից ավել զբաղեցրած 0,0001 հա հողը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, չի խախտում անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0,0001 հա /կադաստրային ծածկագիր՝ 04-040-0006-0004/ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Մարջիկ Մնացականի Ղազարյանին /ծնված 28.03.1959թ./:

2. Առաջարկել ՀՀԿԱԳԿՊԿ համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Մարջիկ Մնացականի Ղազարյանի /ծնված 28.03.1959թ./ սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թվականի ՀՈՒՆԻՍԻ 14
ք.Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 1553-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՄԵԾԱՄՈՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 1365-Ա ՈՐՈՇՈՒՄԸ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով, և հաշվի առնելով, որ բնակելի նշանակության օժանդակ շենք շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, և հիմք ընդունելով Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրաշեն բնակավայրի բնակիչ Օնիկ Միշայի Սլոյանի կողմից որպես լիազորված անձ՝ Ալթուն Անդրանիկի Բրոյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վերականգնել Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Ջրաշեն բնակավայր, 12-րդ փողոց, 43 բնակելի տան հասցեում գտնվող փաստացի 0,1162 ք/մ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1985 թվականին կառուցված 90,0 ք/մ բնակելի տան, 2000 թվականին կառուցված 4,8 ք/մ ծածկի, 1990 թվականին կառուցված 20,2 ք/մ թոնրատան, 1990 թվականին կառուցված 35,5 ք/մ անասնաշենքի նկատմամբ Օնիկ Միշայի Սլոյանի/ծնված 16.10.1975թ./, Էդիկ Միշայի Սլոյանի/ծնված 20.07.1979թ./, Յուրիկ Միշայի Սլոյանի /ծնված 01.06.1983թ./ և Խաթուն Ռզայի Միրզոյանի /ծնված 12.02.1974թ./ սեփականության իրավունքը:

2. Առաջարկել Հ.Հ.Կ.Ա. Ա.Գ.Կ. Պ.Կ. համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Օնիկ Միշայի Սլոյանի, Էդիկ Միշայի Սլոյանի, Յուրիկ Միշայի Սլոյանի և Խաթուն Ռզայի Միրզոյանի սույն որոշման 1-ին կետում նշված Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Զրաշեն բնակավայր, 12-րդ փողոց, 43 բնակելի տան հասցեում գտնվող փաստացի 0,1162ք/մ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա 1985 թվականին կառուցված 90,0ք/մ բնակելի տան, 2000 թվականին կառուցված 4,8ք/մ ծածկի, 1990 թվականին կառուցված 20,2ք/մ թոնրատան, 1990 թվականին կառուցված 35,5ք/մ անասնաշենքի նկատմամբ սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

3. 2023 թվականի կառուցված 35,1ք/մ ծածկը համարել որպես ինքնակամ կառուցված շինություն:

4. Օրինական տնամերձ հողամասին կից ավել զբաղեցրած 0,0062 հա /կադաստրային ծածկագիր՝ 04-084-0024-0006/ տնամերձ հողամասն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Օնիկ Միշայի Սլոյանին /ծնված 16.10.1975թ./, Էդիկ Միշայի Սլոյանին /ծնված 20.07.1979թ./, Յուրիկ Միշայի Սլոյանին /ծնված 01.06.1983թ./ և Խաթուն Ռզայի Միրզոյանին /ծնված 12.02.1974թ./:

5. Ուժը կորցրած ճանաչել Մեծամոր համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 23-ի «Համայնքի վարչական տարածքում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» N 1365-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023 թվականի ՀՈՒՆԻՍԻ 14
ք. Մեծամոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մեծամորի համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Մեծամոր, 060656505 info@mecamor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 1552-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԿԻՑ ԱՎԵԼ ԶԲԱՂԵՑՐԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ
